կան թանգարանը[72]։ Այդ պաշտամունքը տարածված էր նաև Փյունիկիայում։ Նեղոսի հովտում, օրինակ՝ հռչակավոր փարոսը, Փոքր Ասիայում և ավելի արևմուտք, նույնպես և Մեծ Կովկասի հյուսիսային վայրերում, ընդհանրապես ընդարձակ տարածության վրա։ Ֆալլոսի հետ տրամաբանորեն զուգորդվում էր բեղմնավորելու զորությունն ու ամենուրեք նրա պաշտամունքի արարողությունների մեջ խիստ ակնբախ կերպով երևան էր գալիս մի ձգտում՝ այդ զորության ազդեցությունը մարդկանց մոտ ուժեղացնելու և նրա միջոցով նաև արթնացնելու և ուժեղացնելու կանանց մեջ որդեծնության ունակությունը։ Այդ հին սովորություններից շատ բնորոշ օրինակներ պահպանվել էին Զանգեզուրում, որտեղ նրանք դեռ շատ ուժեղ էին մինչև սովետական կարգերի հաստատվելը։ Այդ պաշտամունքի վերապրուկները դեռ նշմարվում են։ Այստեղ, շրջանային կենտրոն Սիսիանից (Սիսավանից, նախկին Ղարաքիլիսայից) մի շորս-հինգ կիլոմետր հեռավորության վրա դեպի Գորիս տանող խճուղու աջ կողմում մի քարոտ հրապարակի մեջտեղում դուրս է ցցված մի պորտանման քար։ Հայերը այն կոչում են պորտաքար, իսկ թուրքերը՝ գöբայ դաշ։ Այդ քարի մակերեսն, ինչպես և նրա շուրջը եղած հրապարակը ողողկված են բազմաթիվ հաճախորդների այցելությունից։ Ժամանակին անշուշտ նա ավելի բարձր է եղել, իսկ այժմ միայն այդ ամբողջական ֆալլոսի խղճուկ մնացորդն է պահպանվել, որի վրա անցյալում շքեղ կանայք, պորտով պառկելով, շուռումուռ են եկել, այն հաստատ հավատով, որ այդ քարի զորությամբ անպատճառ կհղիանան և զավակ կունենան։ Անցյալում հաճախ կարելի էր տեսնել նաև դեպի Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակը բարձրացող քոչի ժամանակ թուրք կանանց այդ արարողությունը կատարելիս։ Պորտի վրա պառկելուց հետո կանայք երկաթե մեխեր էին ցցում քարին՝ իրենց ցավը նրան ամուր գամելով։ Հենց այս երկարատև արարողություններից քարը մաշվել՝ ողորկվել է։

Այսպիսի ֆալլոսանման քարեր, որոնք կրում են, կարծես, մարդու ձեռքի արվեստի հետքեր, մի քանի հատ ցույց են տալիս նաև Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակի վրա Լեռնային Քրդստանի՝ Լաչինի սահմաններում։ Սակայն շատ դեպքերում կասկածելի է՝ արդյոք դրանք սովորական չինգիլներ չե՞ն, որոնց վրա խազերն առաջ են եկել ոչ թե մարդու գործիքի աշխատանքից, այլ անցուդարձ անող հովիվների և անասունի շփվելուց։

Որոշակի կերպով մարդկային ձեռքի գործ են այն ֆալլոսանման հուշարձանները, որոնցից մի-մի օրինակ գտնվում են Տաթևի և Որոտնա, կամ Վաղուդու վանքերում։ Նրանց ծագումը նույնպես կապվում է սեռանդամի պաշտամունքի հետ։

Դրանք շարժվող սյուներ են՝ կարծես ավելի կենդանի դաղափար տալու համար իրենց բուն նշանակության, նրանց վերագրվող մագիկ ֆունկցիայի մասին։

Տաթևի վանքի հարավային պատից մի փոքր հեռավորության վրա կանգնեցրած է հարևան վանահայրական շենքի տանիքից բարձր քարե մի սյուն, որն իր ութանկյան ընդհանուր կերպարանքով հանդերձ կրկնում է ֆալլոսի էական ձևը։ Գլխին նստեցրած է մի անարվեստ խաչքար, ամբողջության հետ

---

[72] Քարից շինված ֆալլոսի մի խոշոր օրինակ իր պատվանդանով նույնպես տեղափոխված է այնտեղ հարևան Աղդաշ գյուղի մերձակայքից, որտեղ նա հայտնաբերված էր պատահական պեղումների ժամանակ մեկ մետր խորության վրա։